ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՐՅԱՆ Փ. 22
0002
ՍԾ/34.1-Ս2-5/4947-2024

ARMENIA YEREVAN 0002 29 NOV 2024 HayPost ՀԱՅՓՈՍՏ

L0125532178AM

ARMENIA YEREVAN 30 DEC 2024

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ / RETURN	CN15
☐ Անհայտ/ Unknown	☐ Մերժված / Refused
☐ Տեղափոխված/ Gone away	☑ Չի պահանջվել/ Unclaimed
☐ Թերի հասցե/ Insufficient address	☐
Ետ վերադարձման ամսաթիվ / Return Date	30-12

Արամայիս Ղուկասյանին
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ Քանաքեռ-Զեյթուն, Ա. Տիգրանյան փողոց, 48ա

powered by Envelope, envelope.haypost.am

ARMENIA YEREVAN
0002
03 JAN 2025
ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-15) 566072

« 21 » հոկտեմբերի 2024 թ.

№ ՍԾ/34.1-Մ2-5/4947-2024

Քաղաքացի Արամայիս Ղուկասյանին

Ի պատասխան Ձեր 12.10.2024թ.
№h.1282175 գրության՝

Հարգելի պարոն Ղուկասյան,

Ձեր ներկայացված հարցադրումների առնչությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը հայտնում է հետևյալը.

Արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիան տրամադրում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը: Նշեմ, որ ըստ «Էներգետիկայի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 15-րդ կետի՝ լիցենզավորված անձ է հանդիսանում,նույն օրենքի համաձայն, լիցենզիա ստացած ֆիզիկական կամ իրավաբանական անձը: Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման գործընթացը կարգավորվում է հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգով՝ այսուհետ՝ Կարգ (հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=162211): Լիցենզիա ստանալու համար հանձնաժողով է ներկայացվում հայտ, որը պետք է լրացված լինի Կարգի №1 հավելվածի համաձայն և պարունակի Կարգի №2 հավելվածով՝ տվյալ տեսակի լիցենզիայի համար նախատեսված փաստաթղթերը: Մասնավորապես՝

1. արևային էլեկտրակայանների պարագայում՝ կայանի կառուցման ժամանակահատված ներառող էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի ստացման հայտը պետք է պարունակի հետևյալ փաստաթղթերը.

1) գործարար ծրագիր՝ համաձայն նշված կարգի №4 հավելվածի,

2) լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ համապատասխան նպատակային (գործառական) նշանակությամբ հողամասի (շենք, շինության) նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և համապատասխան որակավորում ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ իրավասու մարմնի կողմից տրված հատակագծի պատճենը: Լողացող արևային կայանների դեպքում սույն ենթակետում նշված փաստաթղթերի փոխարեն կարող է ներկայացվել ջրային օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը (ջրային օբյեկտի վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման դեպքում, եթե սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականում առկա չէ նշում վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման ժամկետի վերաբերյալ, անհրաժեշտ է ներկայացնել նաև վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման պայմանագրի պատճենը, ընդ որում, ենթավարձակալության դեպքում՝ նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը. այդ ժամկետները պետք է լինեն լիցենզիայի գործողության ժամկետից ոչ պակաս), իսկ դրա բացակայության դեպքում այդ օբյեկտի սեփականատիրոջ գրավոր համաձայնությունը կամ թույլտվությունը ջրային օբյեկտի վրա հայցվող պարամետրերով և ժամկետով (ժամանակահատվածներով) կայան կառուցելու և շահագործելու վերաբերյալ, և համապատասխան որակավորում ունեցող անձի կողմից կազմված ջրային օբյեկտի հատակագիծը,

3) հայտարարություն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային http://www.azdarar.am/ կայքում՝ համաձայն նշված կարգի №5 հավելվածի,

4) երաշխիք՝ համաձայն նշված կարգի №3 հավելվածի,

5) Էլեկտրական էներգիայի բաշխման կամ հաղորդման լիցենզիա ունեցող անձից էլեկտրական ցանցին պահանջվող հզորությամբ միացման հնարավորության վերաբերյալ տեղեկանք՝ էլեկտրական էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիայի դեպքում,

6) պետություն-մասնավոր գործընկերություն գործարքի դեպքում՝ պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրի պատճենը,

7) Օրենքով սահմանված՝ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքից հրաժարվելու դեպքում՝ համապատասխան գրություն, որով հայտատուն տվյալ հայտի շրջանակում հրաժարվում է Օրենքի 35-րդ հոդվածի 1.2-րդ մասով սահմանված էլեկտրական էներգիայի գնման երաշխիքից,

8) Բացառապես սեփական կարիքների նպատակով էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի դեպքում՝ տվյալ սպառման համակարգի առավելագույն հզորությունը հիմնավորող փաստաթուղթ՝ միացման պայմանագրի պատճենը, հաշվառման քարտից կամ էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակցի պրոֆիլից արտատպված տեղեկատվություն: Ընդ որում՝ կառուցվող կայանի հայցվող հզորությունը չպետք է գերազանցի սպառման համակարգի առավելագույն հզորությանը:

2. Կառուցման ժամանակահատված չներառող արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի ստացման հայտը պետք է պարունակի հետևյալ փաստաթղթերը.

1) կառուցված (վերակառուցված) կայանի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը հավաստող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները), եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվում է նշված իրավունքների պետական գրանցում, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն նշված իրավունքների պետական գրանցում չպահանջվելու դեպքում՝ իրավասու մարմնի կողմից տրված համապատասխան հիմնավորումները,

2) կայանում տեղակայված սարքավորումների (ագրեգատների) վերաբերյալ տեղեկանք՝ դրանց մակնիշի, հզորության, արտադրության տարեթվի նշումով՝ կցելով անհրաժեշտ հիմնավորումներ,

3) էլեկտրական էներգիայի բաշխման կամ հաղորդման լիցենզիա ունեցող անձից էլեկտրական ցանցին պահանջվող հզորությամբ միացման հնարավորության վերաբերյալ տեղեկանք՝ էլեկտրական էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիայի դեպքում,

4) պետություն-մասնավոր գործընկերություն գործարքի դեպքում՝ պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրի պատճենը,

5) Օրենքով սահմանված՝ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքից հրաժարվելու դեպքում համապատասխան գրություն, որով հայտատուն տվյալ հայտի շրջանակում հրաժարվում է Օրենքի 35-րդ հոդվածի 1.2-րդ մասով սահմանված էլեկտրական էներգիայի գնման երաշխիքից:

Էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրական էներգիայի արտադրության ժամանակահատվածի համար (մինչև 6 Մվտ դրվածքային հզորություն), «Պետական տուրքի մասին» օրենքի համաձայն, լիցենզիայի համար վճարվում է պետական տուրք՝ բազային տուրքի 100-ապատիկի չափով: Նույն օրենքի համաձայն՝ բազային տուրքի չափ է սահմանվում 1000 դրամը:

Միևնույն ժամանակ հայտնում եմ նաև, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» և «ե» ենթակետերի համաձայն՝ արևային էլեկտրակայանների մասով լիցենզավորման ենթակա չէ միկրոէներգաարտադրողի և ինքնավար արտադրողի (մինչև 150 կՎտ դրվածքային հզորությամբ արևային կայանում) գործունեությունը՝ և՛ կառուցման, և՛ էլեկտրական էներգիայի արտադրության ժամանակահատվածներում:

Ս. Շահինյան

Invalid signature

X

ՍԵԴԱ ՇԱՀԻՆՅԱՆ

Կատարող՝ Շ. Սողոմոնյան ☎ 56-49-27 (345)